


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻՍԻ

Նամակ կամ ուր եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱՇԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եգիպտոսի համար տրեկին. ողջ դճ. 80
» » վեցամսեայ » 50
Օսար երկիրներ տրեկին Գրանց 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեանս ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր:

ԿԱՆՈՒԽ ՉԷ՝

Երբ ծանուցուեցաւ թէ որբերու խնա-
մածու Յանձնաժողով մը կը կազմուի Գահիրէի
մէջ, գոհունակ տպագրութիւն մը ունեցանք,
ո՛չ թէ անոր համար որ Փարոսին յիշեցու-
ցած այս խնդիրն ընդգրկուեւ է Առաջնոր-
դարանին կողմէ, ալ անոր համար որ Եգիպ-
տահայերն ալ իրենց մասնակցութեան բա-
ժինը պիտի նուիրեն հաւան պէտքեր մը որուն
այնքան հոգ կը տանին Պարոս ու գաւառներ-
րու հայերը, և մինչեւ իսկ օտարներ: Դժ-
բաղդաբար, Յանձնաժողովի անդամիկ գու-
մարման վրայ մեր առած տեղեկութիւնը քա-
ջաւերիչ չէ. միակ անդամ մը անձամբ պա-
տասխաններ է իրեն ուղղութեամբ հրաւերին, և
աւելորդ է հետեւցունել թէ նիստը տեղի չէ
ունեցեր: Շատ կանուխ չէ՞:

Յոռետես չըլլալու համար՝ պիտի են-
թադրենք թէ բացակայ անդամները արդե-
լիչ զբաղումներ ունէին և թէ երկրորդ հրա-
ւեր մը մարմին պիտի տայ յղացուած զաղա-
փարին: Հանգանակութիւն կատարելը զիւ-
րին գործ չէ, կ'ըմբռնենք, մանաւանդ գաղ-
թականներուն ինպատու կատարուածէն ան-
միջապէս ետք՝ նոր դիմումներ ընելը: Բայց
գաւառներուն անկիւնը անհայր, անմայր ու
անխնամ մնացած այդ հաղարաւոր տղանե-
րուն վիճակը ինքնաբոխ կարեկցութիւն մը
կազդէ արդէն ամեն հայու սրտին. գործը
փաստաբանութեամբ, արտաշարժ կոչումներու
պէտք չունի:

Պատրիարքարանը լրջօրէն ձեռք առած
է այս հոգատարութիւնը: Նախապէս կաղ-
մուած որբախնամ մասնախումբին վրայ ա-
ւելցած է նոր Յանձնաժողով մըն ալ. այդ
մարմինները կը զբա ին ո՛չ այնքան հանգանակու-
թիւնով, — վասն զի դրամն ինքնին կը նուիրուի
արդէն ամեն կողմէ, — այլ աւելի՝ որբերու
տեղափոխման ու տեղաւորման գծուարու-
թիւնները հարթելով, միաժամանակ հետ
բանակցութիւններով և օտար հաստատու-
թիւններու մէջ ընդունուած տղաներուն ազ-
գային — կրօնական գաւառարակութիւն մը ա-
պահովելու հարցով, որ աւագ կարեւորութիւն
ունի:

Եգիպտահայերը այս մտածումներէն ու
բանակցութիւններէն ազատ են, գոնէ գործ-
նականի մէջ. իբրեւ հայ կրնան հետաքրքրու-

ուիլ, լրագիրներէն մանրամասն տեղեկութիւն
առնել թէ ո՛ր քաղաքներու մէջ, ո՛րո՞նց ձեռ-
քով ու որքան ո՛րք որդեգրուած է. թէ եւ-
րոպայիք ու ամերիկայիք ի՞նչ ձեռ ու կաղ-
մակերպութիւն կուտան իրենց այս հայասէր
բարեարարութեան, թէ մերիկներն ի՞նչ կ'ընեն
Այստեղ կատարուելիքը միմիայն հանգանա-
կութիւն մըն է, որուն արդիւնքը յաջորդաբար
պիտի հասցուի կեդրոնին: Արտադրելիք օգու-
տիմ համեմատութեամբ այսքան թեթեւ զո-
հոյութեան մը առջեւ չենք կարծեր որ վարա-
նողներ գաւառին գաղութի մը մէջ որ միշտ սա-
տարող գտնուած է ազգային աղէտներու
ժամանակ:

Աղբաւանդ ըլլող եկեղեցիէն ու թաղական
խորհուրդէն ալ կը սպասենք նախաձեռնու-
թիւն մը. այս երկու մեծ քաղաքներու հա-
յութիւնը համընթաց եղած է, եթէ ոչ վար-
չական տեսակէտով, գոնէ բարեբաղիտ մէջ,
և զիրար գերազանցելու աշխիւ ճիգեր տես-
նուած են, ինչպէս ԳՅ օգոստոսէն ետք:
Որբերու խնդիրը աւելի կենսական է և ա-
ւելի կարօտ գթութեան:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Եւրոպական ազատախոհ ու անկախ թերթ
մը սապէս կը դատէ քաղաքական արդի
անորոշ կացութիւնը:

Ամեն օր կը կրկնեն մեզի թէ զեսպանները
փութոյ պնդութեամբ առաջ կը տանին Թուրքիոյ և
Յունաստանի միջեւ կնքելի հաշտութեան բանակ-
ցութիւնները: Բայց այս գործունէութենէն արդիւնք
մը առաջ չի գար: Մինչեւ ցարդ բան մը չեղաւ, բան
մը չ'ըլլար ու անկախիկներ կը սկսին ըսել թէ բան մըն
ալ ըլլալի չունի, թէ արարողան նոյնն է ինչ որ Լը
Հայերուն համար, — որոնք կը չարունակուէին Զար-
գուիլ, երբ միեւնոյն ատեն գիւսանագրութիւնը ա-
մենայն լրջութեամբ կը միճէր թէ գրամական ինչ
հաստատումներու իրաւունք ունին անորոշ նախորդ
կողմորոշումներուն համար, — և թէ սպասուած իս-
րապետութիւնը չի պիտի կնքուի:

Ի Կ. Պոլիս, ինչպէս ամենուրեք, Եւրոպա կը
հաւարուի իր անկարողութիւնը միայն ցոյց տալու
համար և այս՝ այն պատճառաւ որ այդ վեց տե-
րութիւններուն մէջ երկուքը կան, Աւստրիա և
Ռուսիա որոնց գործին չի գար արեւելեան խնդիրն
կարգադրութիւնը. ատեն կը փափաքին որ Բոսնիի
հիւանդութեան մը կամ անլուծելի չարքի մը վի-
ճակին մէջ միայն այդ խնդիր, մինչեւ որ երկուքն
մէկը պատեհ տրիմ գտնէ իր ըմբռնած երանակաւ
լուծելու, Աւստրիա՝ մինչեւ Սերանի երթալու համար՝
ձամբուն վրայ գրաւելով ամբողջ Եգիպտոս ու թեր-
եւ Մակեդոնիայէն ալ մաս մը, և Ռուսիա՝ Մեծն-

Պետրոսի երազը իրականացնելու համար: Մինչեւ
այն ատեն, ըլլալիքը ճեփ մըն է միայն, ո՛ր հինգ-վեց
տարիէն աւելի չի կրնար տեսլի, ու անկարող է ար-
դիւնել իրաւաստներով լեցուն այս չննդին քայքայումը:

Խօսելով Կրէտէի կացութեան վրայ, զոր
անկերպարան և անորոշ կը նկատէ և մինչեւ
իսկ վտանգաւոր՝ կղզիին մէջ լեցուած միջադ-
գային զինուորական զօրութիւններուն պատու-
ճառաւ, որոնց մասին թիւրիմացութիւն մը,
դէպք մը կրնայ նոր աղէտներու դուռ բանալ,
կ'աւելցունէ:

Կըսեն թէ Զարը՝ լուսագոյն զգացումներ տալ
ծելով հիմայ Յունաստանի իր ազգականներուն
նկատմամբ՝ կը խորհի եղբր Կրէտէն ոչ թէ հար-
կատու ինքնօրինութեան մը վերածել, այլ անկախ
իշխանապետութեան մը, Եւրոպիոս իշխանին ձեռքին
տակ, որուն այս կերպով պիտի հաստատուէ իր ե-
րախտագրութեան հարկը (ձարանի մէջ իր կեանքը
փրկած ըլլալուն համար մոլեռանդի մը հարուածէն):
Եթէ այս կամը աւելի կանուխ յայտնուած ըլլար,
կրնար Եւրոպան ազատել այս բոն մտահոգութիւն-
ներէ և Յունաստանը՝ մեծ աւանդ գործողութիւններէ:

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Պառնաբօն ալ անձնապաշտ ըլլալէ ետ-
քը՝ ա՛յ կը հաւատարմ քե աշխարհի պիտի կոր-
ծանի, եթէ երբեք, իրաւ, կործանելու սկսած
չենք արդէն:

Բնականաբար վեց օրուան մէջ շին-
ուած եւ հինգ հազար տարիներէ ի վեր գո-
յութիւն ունեցած բան մը, անակն, յան-
կարծ չի կրնար անհետանալ փառնորդ ժաւ-
ռան մէջ:

Կործանման գործին մէջն ալ անշուշտ
կարգ կանոն մը կայ, երբ մանաւանդ մը-
սածուի քե աւանակ բան մը ընելու Ժանքե-
զին ունեցողը ոչ ինձի եւ ոչ ալ ձեզի պէս
մեկն է:

Միջիւններ, միջեւներ ունեցող մեկը
ահա՛, կեանքէն ձանձրացած, շոգեւառի մը
մէջէն ինկզիմէր ծովը կը նետէ, յախեւեա-
կանութեան մէջ յոգանք մը ընելու համար:

Այս շուրջ ոչ փառաբան եւ ոչ ալ ազ-
գային ըլլալու հանգամանք ունի. սակայն
կ'արժէ որ մեր «Այժմեայիս» խորագրին
սակ ֆանի մը խօսք ըսուի այս առթիւ:

Պառնաբօ՝ ընկերութեան եւ ցած խա-
ւերէն բարձրանալով հասած է երկրագնիս
հինգ վեց հարուսներէն մին ըլլալու:

Թրանսլապ գացած ասեմ իբրեւ դրա-
մագոյն՝ էջ մը միայն ունի. եւ այսօր քե-

րեւս անխնայ անկի ունի, որքան որքան ան-
ցած է... Երեսնամեկ փակիկն մասակարա-
րին ձեռնէն, եւ գիտեմք թէ որքան որքան
կ'սպարի Յարութիւն Պատրիարքի զան մէջ:
—Բաղդի խնդիր, պիտի ըստէ:

Տարակոյս չկայ, բայց այդ քաղաքը գրե-
նելու համար կը կարծեմք թէ սէտիւրի մը ան-
կիւնը քննադատը բաւական է:

Մասաչուսեթս մէջ միայն ներքին է ըսել
թէ քաղաքը մարդու պատկած ասեմը կու
գայ: Իրական կեանքի մէջ ասանկ բան չի
կայ... Ի բաց առեալ տեսակ մը կիներու
համար:

Պառնապոյի քաղաքը ձեռք անցրելու
համար, ահագին գործունէութեան, կամֆի,
խիլիի եւ աշխատութեան պէտք կայ:

Տարիներով եւ տարիներով յոգնելու,
մաքաւելու, տոկոսով է այդ միջոցներու
տեղը ըրալու համար:

Իր այս քաղաքահարմար վիճակին մէջ,
ուսկեանքերու քաղաքը տարի տարի ան-
գամ եւրոպայ կը ճանաչողէր, կերպար, կու-
գար, այսօր այս ծրագիրը գործադրելը կու-
սար, փաղը միայն շարունակ աշխատութեան
վրայ էր առանց փայլեան մը յոգնելու,
վիստելու եւ քաղաքացի:

Երբ Պառնապոյ հարաւս կ'ըրար, աւ-
կարանները ելեւէջներ կուներային. սակայն
հակառակ այս ամենակարողութեան, մարդը
առտուրէն միջոց իրիկուն կ'աշխատէր, Կե-
սարացիի քով ամսական առնող պաշտոն-
եայի մը պէս:

Աշխատութեան ոգին ասկէ փառաւոր
օրինակ մը տուած չէ:

Այն պահուն որ հայերու ծոյր ըրալը
կամ ըրալը զարմանալի գոգադիպութեանը
մը խնդրոյ նիւթ կը մասակարարէ Պոլսոյ,
Կովկասի եւ Եգիպտոսի հրապարակներու
շատ à propos գտնել Պառնապոյի վրայ սա-
ֆանի մը խօսքերը ըսելու, մեր դիւրագգած-
ներուն հասկցնելու համար թէ, կրնա՞ն օ-
րինակ մը մեզ ցուցնել իրենց մէջէն որ
այդ միջոցներէ շատ աշխատութեան պա-
ռած ըրալ իր կեանքին մէջ:

Մենք շատ համոզուած ենք որ՝ այդ մեր
աղաներէն մին եթէ ինքն աշխատանքին
Թրանսպարան գացած ըրալով սակ 20 կամ
30 հազար ոսկի շահած ըրար, այդքանը
քաղական պիտի սեպէր, ինքզինքը յոգնած
պիտի զգար եւ պիտի դառնար Պոլիս, Բա-
գար-Պաշի տուն մը առնելով, իր մնացած
օրերը ռախիի թէփսիի մը առջեւ անցընելու
համար:

Թերեւս ձեռնարկէ Շարգիլէի աշխատ-
անոյ կ'ըրար:

ԱՅԵՆԱԿԱՆ ՆՕՐԵՐ

Դ.

ՎՈՒՆԻ

Այժմիս հանրային չէնքերուն ամենէն
տանէն է վրոյն, այսինքն՝ ազգային ժողովա-
րանը, զոր գերմանացի ճարտարագէտ մը չի-
նած է 1875ին, Օտոս Աթաթիոնի եւ Օտոս
Բոլորգորոնիսի անկիւնը:

Ազգային երեսփոխանական ժողովը միակ

օրէնդիր իշխանութիւնն է Յունաստանի: Եւ-
րակոյտը ջնջուած է 1862ի յեղափոխութենէն
ի վեր, երբ յոյները Օթոն թագաւորը վաճ-
տեցին եւ Եօրիտը բերին տեղը: Այժմ յոյն
որ հողատէր է կամ անկախ կացութիւն մը
ունի, ընտրող է 21 տարեկան հասակին եւ
ընտրելի երեսուն տարեկան: Ժողովը կը բաղ-
կանայ 207 երեսփոխաններէ որոնք չորս տա-
րի պաշտօն կը վարենք եւ տարեկան 2000
տրակաի կը ստանան, այսինքն 66 ֆրանսա-
կան ոսկի:

Յունական սահմանադրութիւնը շատ ա-
զատական է: Այժմ քաղաքացի հաւատար է
օրէնքին առջեւ. անհատական ազատութիւնը,
գումարութեւն ազատութիւնը, կրօնական ու
մամուլի բացարձակ ազատութիւնը ապահով-
ուած են. քաղաքական յանցանքի համար ըս-
տացումքի գրաւում եւ մահուան պատիժ
ջնջուած են, նախնական ու բարձրագոյն կըր-
թութիւնը ձրի է բոլորովին:

Յունաստանի մէջ կուսակցական մեծ բա-
ժանումներ չի կան: Երեսփոխանական ժողո-
վը երկու բաժանում ունի միայն. նախարա-
րականները եւ ընդդիմադիրները:

Նիստերու ժամանակ ժողովարարը, ճըշ-
մարիտ ըսելու համար, շատ պատկառանք
չ'ազդեր: Ընդհանուր խառնաշփոթութեան մը
մէջ անդի կուսակցայ ամէն բան: Երեսփոխան-
ներու եւ բարապաններու ազգականները ու
բարեկամները անընդհատ կը մտնեն կ'ըլեն
սրահը, բարձրաձայն կը խօսին ու կը ծխեն,
առանց ուշադրութիւն ընելու նախագահական
զանգակին: Երեսփոխաններուն մէջ կան Պելո-
պոնէսի ներկայացուցիչներ, իրենց ազգային
տարազով. կարմիր հոգովածի ուղեբեմին, կարճ
ֆուսթիանէլա մը հագած ու մէջքերին դա-
շոյնով ու ասորձանակով սպառազինած: Այդ
քաղաքականները ընտւ չեն խօսիր, բայց երբ
իրենց հակակարծիք երեսփոխան մը բեմ ել-
լէ ու քիչ մը երկար խօսի, իրենցմէ մին բե-
մին քով երթալով աթոռ մը կ'առնէ ու ճա-
ռախօսին դէմը կը նստի ծուռ ծուռ երեսը
նսցելով: Այդ ըստ ընդմիջումը այնչափ պեր-
ճախօս է յաճախ որ ընդդիմադիր շատ ան-
գամ խոհեմութիւն կը համարի խօսքը կարճ
կատելով՝ երթալ տեղը նստիլ:

Զմուռամ ըսելու որ Թեսաղիայի ներկա-
յացուցիչը թուրք մըն է, որուն պաշտօնը
դադրած ըլլալու է անշուշտ, այս միջոցիս:

Վիճաբանութեան առնէն ընդդիմախօս
ները ամենէն ծանր նախաախնքները կը տե-
ղանքն իրարու դիմին: «Գող, աւազակ» բա-
ռերը այնչափ կը փոխանակուին որ ա՛լ նա-
խագահը ատուր համար չ'միջամտեր ու ի կարգ
հրախրեր նախատիչը: Շատ անգամ բուն
վիճաբանութեան նիւթը կը մոռցուի եւ անձ-
նականի կը վերածուի խնդիրը:

Դուն եթէ չնորհրով մարդ ըլլայիր կինդ
երեսի վրայ չէիր ձգեր ու այսինքն կնոջ հետ
ժամանակ անցընէր, կը պոռայ մին նախարար-
ներէն մէկուն:

Դուն ինձի դաս պիտի տաս: Դեռ
անցած գիշեր գողութիւնդ բռնուեցաւ քիւ-
պին մէջ, կը պատասխանէ նախագահը:

Ունկնդիրները կը սկսին խնդալ ու ծա-
փահարել, ոմանք ալ կը սուլեն, իւր թէ եր-
գեցիկ սրճարանի մը մէջ ըլլային:

Ընդհանրապէս յոյն երեսփոխանները մեծ
գիւրութիւն ունին խօսելու: Առանց գեղեւե-
լու կը խօսին ժամերով, ամենաշնչին խնդրի
մը առթիւ վկայութիւններ կը բերեն Տեմա-
թէնէն ու Տուրիդիտէսէն: Յետին գիւղապե-
տը որ յանցանք մը գործած կամ արժանիք
մը ունեցած է, կը բաղդատուի Կիմոնի կամ
Պերիկլէսի հետ, վերջապէս ամենքն ալ քիչ
մը վարժապետ են:

Պ. Տելիեանիս, նախորդ անգամիս նա-
խարարապետը, նոյնպէս մեծ ճառախօս
մըն է, չափազանցեալ ձեւերով եւ ո՛չ պէտք
եղածին չափ պաղարիւն: Արտաքին քաղա-
քականութեամբ շատ զբաղած է եւ տե-
ղեակ է դիւանագիտական ամէն նրբութիւն-
ներուն: Երկար առնէն Բարիդի գեպան եղած
է եւ Պելոպոնէսի վեհաժողովին մէջ ներկայացու-
ցած է Յունաստանը եւ յաջողած Թեսաղիան
կողմերը:

Տելիեանիս մեծ հայրենասէր մըն է եւ
Դիքեուքիսի մահուանէն ի վեր գրկիմ է Յու-
նաստանի միակ ճշմարիտ քաղաքագէտ անձ-
նաւորութիւնը: Պատերազմէն ի վեր իրեն
դէմ եղած յարձակումները եւ իր անկումը
անարդար էին: Անշուշտ Յունաստան մեծ
սխալ մը գործեց առանց պատրաստութեան
կռիւի մէջ նետուելով, բայց պատերազմի հրա-
տարակումը Տելիեանիսին գործը չէր եւ ինք իր
ամբողջ նախարարութեան երկար շրջաններուն
մէջ միշտ ջանացած է խոյս տալ կռիւէ, ու
ըրկհետեւ ամենէն աղէկ գիտէր իրենց կա-
րողութիւնը:

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

ԳՐԶԻ ԲՄԱՆԱՃՈՅԲ

ԴԱՄԱՆԱՍ ԱՌ ՕՍԻՐԻՍ

Նոր բաները կը սիրենք, Օսիրիս:
Օրինակի համար կը սիրենք ինչէֆօնը, երկարու-
կան թրամուլը, արհեստական խաղաղաւ ժողովը,
սինիմաթօկոֆը (Պաղար տը Եօրիտի կնոջ չ'ըլլալու
պայման), օդապարիկի մէջ ամուսնութիւնները,
իսթէնի թատերգութիւնները, Վալիւնի երաժշտու-
թիւնը, Մօրօլիսի ֆրանսերէն լեզու աւտոտա-
նած Մեքսիկոյի, Հնդկաստանի երկրաշարժը,
Բարիդի փոխօրիկը, «Փարոս» հրատարակութիւնը
եւայլն, եւայլն, այո՛, կը սիրենք, ըսէ՛:

Եթէ յառաջագիտութեան սիրահար ես, ձեռքդ
տուր, շնորհաւորէ՛ զիս, պիտանա կարգա՛, արձան
մը ապագիւն, սկի տառեր պատրաստել տուր...
պատմութեան մէջ անունս արձանագրելու համար,
աշխարհիս յոյս կողմը հետագիւն, ըստպատի մը
զիր գլխու վրայ:

Վերջապէս ձեռքդ երածը ըրէ՛ գողութեւ, փա-
ռաւորելու, անմահացնելու համար անունս:

Ահագին գիտ մ'ալ ես ըլլի իմ կարգիս եւ
գիւտ մը ընելու հաւար մի՛ կարծեր, Օսիրիս, որ մար-
դու անունը անպա՛. ճառ ֆօնօն ու, Էօրիտ, Եօրիտ,
Մարիթ կամ առ նուազ ֆօն ըլլալու է: Այլա-
գետներ պիտի գիտենք ըրած է ամեն անգամ՝ երու-
սագէմ երթալուն:

Գիտես ինչ է գտածս, մօրիկ ըրէ՛: Տեսայ որ
Գահիրէի ազգային վարչութիւնը արիւն քրտինք
թափել է վիճել, կրօնէք, զգոհութիւններ յա-
րուցանել վերջը հոգիս կրցու միջոց մը գտնել
Առաջնորդարանի անտուկին հատկութիւններ
եւ այս նպատակով սակագիւններ պատրաստել որոնց
վրայ Մար Բէնի պիտի հիմնար:

Եւ ինչպէս քան հանդարտ, ժպիտ ի շրթուս,
արդիւնքին սպասեց:

Բայց առաջ...
Ժողովուրդը չի հասկցաւ, բողբոլ ուղեց, քաշ-
բեց, տրամաբանեց, բարկացաւ, խաղիւններու դի-

մեկ փորձեց և միտքը դրա ոչ ծնիլ, ոչ ամուսնանալ և ոչ մեռնիլ :

Իրայ այս վիճակին վրայ կէս ժամ մտածելէս վերջը գիտաւ ըրած էի . ինչ տեղը կար որ այդ բոլոր մարդերը, բանբաստէին , ժողովուրդը գծկաւ մակութիւն ցուցունէր և հաւանականորէր ազգային անտուկը պահէր իր statu quo :

Միտքերին ինչ է . Առաջնորդարանի հասոյթին աղբիւրնէր ստեղծել , իմոյ վաւերացնեն գիտաւ et tout ira bien dans le meilleur des mondes .

Արդ, ես կառաջարկեմ : Պաշտի քառասուոր թուղթ մը փակցնել առաջնորդարանի ժողովարան , հին ճակատը , որուն վրայ սա քանի մը բաւերը գրուած ըլլան :

Ժողովակցն էմենսիներ պարսին հայերէն խօսիլ այս սրահին մէջ . հսկողուակ պարագային՝ մեկ միլիէմ տուգանքի պիտի դատաւարուին ամեն անգամ որ օտար լեզուէ բառ մը ասասանեն :

Եթէ այս կերպով տարին 3000 ասի եկամուտ չի գոյանայ, ես ալ Ռոմանոս չեմ :

ՌԱՄՍԵՍ

ՅՈՐԴԱՆԻ ԶԱՐԱԹԸ

Կիրակիէն ի եր , հեռագրիւններն իրենց լրաբերութեան մեծագոյն մասը նուիրած են Լոնտոնի մէջ կատարուած նախապատրաստութիւններուն ու հանդէսներուն՝ Վիքթորիա թագուհոյն գահակալութեան վաթսուամեայ յորէլեանին առթիւ որ վեհաշուք կերպով տօնուեցաւ ամբողջ Մեծն-Բրիտանիոյ և անգղիական տիրապետութեան առի՛ գանուած երկիրներուն մէջ :

Եգիպտոս ալ արժանաւոր կերպով տօնեց այդ յորէլեանը : Կիրակի առաւօտ , Պուլքի անգլիական եկեղեցիին մէջ գոհարանական աղօթքներ կարդացուեցան : Ներկայ էին Լորտ Քրոմըր , Քիչներ փաշա և զօրավար Քէնէթ Հէնտերըն՝ իրենց սպաներով , ինչպէս նաեւ անգլիական գաղթականութեան երեւելիները : Նոյնպէս՝ Եգիպտոսի պաշտօնական մարմիններէն՝ Բարձր Խալիֆն արարողապետ Հասան փաշա Սարմ , նախարարապետ Մուսթաֆա փաշա Ֆէհմի , արաբին զործոյ նախարար Պուլթոս փաշա Ղալի , ելմական նախարար Մաղլում փաշա , դատական նախարար Իպրահիմ փաշա Ֆուստ , պատերազմական նախարար Ապանի փաշա , ամենքն ալ համազգեստով : Ներկայ էին նաեւ օտար տէրութեանց բոլոր ներկայացուցիչներն ու հիւպատոսական պաշտօնէութիւնները :

Արարողութիւնը տեւեց երեք քառորդ ժամ , որմէ ետք Լորտ Քրոմըր՝ զինուորական շքեղ թափօրով մը՝ Մուսթի լատինական եկեղեցին դնաց ուր նոյնպէս արարողութիւնը կատարուեցան :

Գահիրէի բոլոր անգլի հպատակաց տուններն ու վաճառատունները դրօշալարդ էին և մեծ ոգեւորութիւն կը տնչէր քաղաքին մէջ :

Երէկ առաւօտ , ժամ 7 1/2ին , Ապրիլի հրապարակին վրայ անգլի բանակին կողմէ զօրահանդէս մը կատարուեցաւ , հազարաւոր ժողովուրդեան ներկայութեամբ , որմէ ետք՝ Լորտ Քրոմըր՝ հիւպատոսարանի մէջ ընդունեց անգլիական գաղթականութեան և ուրիշ պաշտօնական այցելուներու շնորհաւորութիւնները :

* * *

Աղեքսանդրիոյ մէջ ալ հանդիսաւոր կերպով տօնուեցաւ ազամանդեայ յորէլեանը :

Կիրակի առաւօտ , գոհարանական աղօթք՝ անգլիական ու սկովտական եկեղեցիներուն մէջ : Ներկայ էին քաղաքին կառավարիչը՝ Իսմայիլ փաշա Սապրի , անգլիական հիւպատոսը ու միւս բոլոր հիւպատոսներն ինչպէս նաեւ անգլի սպայակոյտն ու գաղթականութեան երեւելիները :

Երէկ առաւօտ , Աղեքսանդրիոյ անգլի հիւպատոս Սըր Չարլս Քուքըն ընդունեց գաղթականութեան երեւելիներուն , հիւպատոսական մարմնոյն և տեղական պաշտօնական մարմնոց շնորհաւորական այցելութիւնները :

Գիշերը , շքեղ ցայգահանդէս մը տրուեցաւ ի Սան-Սթեֆանօ , ինչպէս այստեղ Կիզէի պարտէզին մէջ :

ՀԵՌԱՌԻՆԵՐ ԼՈՆՏՈՆԷՆ

20 յունիս . — Գոհարանական արարողութիւններ կատարուեցան Լոնտոնի բոլոր տաճարներուն ու եկեղեցիներուն մէջ : Ահաւոր բազմութեամբ լեցուած է քաղաքը :

21 յունիս . — Վիքթորիա թագուհին Լոնտոն հասաւ ուր խանդավառ կերպով ընդունուեցաւ : Փողոցները դրօշակներով ու ծաղիկներով զարդարուած են : Միջօրէին յետոյ թագուհին սեղան մը տուաւ և զիշերը հայկերոյթ՝ օտար ազգերու ներկայացուցիչներուն : Լորտերու և երեսփոխանական ժողովներն Ուլքեթ մը բուհարկեցին թագուհոյն ուղղեալ : Երեսփոխանական ժողովին մէջ . Խալանտայի երեսփոխանները բոլորեցին և սրահին մեկնեցան բուհարկութեան ատեն : Խալանտայի մէջ միթիւններ տեղի ունեցան Յորէլեանին դէմ բողոքող :

22 յունիս . — Հազարաւոր անձինք գիշերը փողոցներուն մէջ անցուցին ուր հոծ բազմութիւն կը խռովէր առաւօտէն , շատ կանուխ : Մեծ ոգեւորութիւն կը տիրէ ամեն կողմ :

Աւստրալիա միջոցներ ձեռք առած է ընդունուող հեռագրութեան պատ պահելու համար , որպէս զի այն վայրէջքին ուր անգլի ազգային երգը երգուի Ս . Պաշտի մայր տաճարին մէջ , ի Լոնտոն , նշանը տուեցուն պէս՝ միւսնոյն ատեն Աւստրալիոյ բոլոր բնակիչներն ալ երգեն զայն :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Առաջնորդական Տեղապահ Տ . Յակոբ Աշոտ Ծ . վարդապետ Փափազեան՝ ընկառակցութեամբ Գաղաթական ժողովոյ Ատենապետ Տիար Բիւռ Բօլատի՝ երէկ առաւօտ ներկայ գտնուեցան Լորտ Քրոմըրի պաշտօնական ընդունելութեան և Ն . Վ . Վիքթորիա թագուհոյն յորէլեանին առթիւ՝ շնորհաւորութիւններ ու բարեմաղթութիւններ մատուցին ի գիմաց Եգիպտոսի հայ գաղթականութեան :

Լորտ Քրոմըր սերակիր կերպով ընդունեց Հայոց Առաջնորդարանի ներկայացուցիչներն ու շնորհակալութիւն յայտնեց :

Նոյնպէս երէկ , Աղեքսանդրիոյ քաղաքի Տ . Վահրամ վարդապետ Աղաբեան՝ իր հետն ունենալով թաղական խորհրդի քարտուղար Տիար Լեւոն Միկրոյեան , Անգլիոյ հիւպատոսարանը գնաց շնորհաւորական այցելութիւն տալու համար Սըր Չարլս Ալֆրէտ Քուքընի :

Ընդհանուր հիւպատոսը խիստ լաւ ընդունելութիւն մը ըրաւ Վահրամ հայր սուրբին որ յանուն Աղեքսանդրիոյ հայ հասարակութեան՝ շնորհաւորութիւններ և բարեմաղթութիւններ ըրաւ Վիքթորիա թագուհոյն յորէլեանին առթիւ :

Սըր Քուքըն յայտարարեց թէ այդ բարեմաղթութիւնները պիտի հաղորդէ Նորին Վեհափառութեան :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Աւասիկ Եգիպտոսի պաշտօնական թերթերն ուր Զեկոյցը որ հրատարակուեցաւ շաբաթ օրուան թիւով .

«Եգիպտական կառավարութիւնը կը ծանուցանէ շոգ ենաւային ընկերութիւններուն և որոնց որ անկէ , թէ նկատելով որ բազմաթիւ նոյներ՝ ապրուստի ո՛ր և է միջոցէ զուրկ՝ եկած են վերջերս Եգիպտոս , այդ դատակարգի անձանց ցամաք հանուիլը խստիւ արգիլուած է յետ այսորիկ» :

—Նախարարները որոնք Գահիրէ եկած էին՝ Անգլիոյ թագուհոյն յորէլեանին առթիւ , երէկ իրիկուն Աղեքսանդրիա վերադարձան :

Նախարարաց խորհուրդը վաղը պիտի գումարուի ի Սան-Սթեֆանօ :

—Աւասիկ ծիսողէն հասած հեռագիրները ժանտախտի մասին . շաբաթ մէկ նոր դէպք և մէկ մահ . կիրակի՝ երեք մահ . երկու ուշաթիւ երեք նոր դէպք և մէկ մահ :

Կ . Պաշէն զրկուած բժշկական Յանձնաժողովը որ պաշտօն ունի տեղոյն վրայ քըն՝ նեղ ժանտախտը , շաբաթ օրը Աղեքսանդրիա հասնելով , Սիւէզի ճամբով ծիսողէ ուղեւորեցաւ :

ԹՈՒՐԳԻԱ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Միակ ուշադրաւ լուրը որ հասաւ կիրակիէն ի վեր՝ հաշտութեան պայմաններուն ներկատմամբ՝ Հալասի հետեւեալ հեռագիրն է .

ՊԵՐԼԻՆ , 21 յունիս . — Վիլհելմ կայսրը հեռագիր մը ուղղեց Սուլթանին՝ խնդրելով որ թուրքերը քաղաքի թեսաղիայէն :

Միւս կողմէ , Աթէնքէ կը ծանուցանեն թէ Յունաստանի պիւտոճէն այս տարի 110 միլիոն տրակի բայ ունի Այս կացութիւն կարգիլէ զի՛քը պատերազմական տուգանք վճարելէ : Այս մտօք գիմում ըրած է մեծ Տէրութիւններուն :

«ՓԱՐՈՍ»Ի ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

«Փարոս»ի բաժանորդներուն ու բնեցողներուն կը ծանուցուի թէ քերթիս ցուխը ուրիշ ու եւ քերթ , պահելու կամ այլ ինչ բաժնելու կամ ծախելու արտօնութիւն չի ստացած խմբագրութեան : Իր միակ պատճառը մեր քերթը բաժնել է :

ԴՊՐՈՑԻՆ ՇՈՒՐՁԸ

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ազգ . վարժարանի ուսուցչաց դատին պաշտպանութեան նուիրուած ձեր մի խորագրականն առիթ տուաւ Պատ . Հոգարարձութեան՝ ընդունուած օրէնքներէն շեղում մը ընելով՝ պաշտօնապէս և հրապարակաւ քննադատելու այն ուսուցիչներն որոնք գեւ կը պաշտօնավարեն իր իրաւասութեան ներքէ : Պատշաճութեան դէմ մեղանշած չենք ըլլար ուրեմն եթէ՛ հետեւելով Պատ . Հոգարարձութեան օրինակին՝ մեր կարգին հրապարակաւ պատասխանենք իր քննադատութեանց այն մասերուն որոնք ուղղակի մեզ կը վերաբերին :

Ա . Պատ . Հոգարարձութիւնը կը յայտարարէ թէ՝ օմինչեւ ցարդ վարժարանի մէջ աւանդուած դասերուն արգիւնքը ժխտական եղած է , և թէ հինգ կամ վեց տարիներէ ի վեր հոն յաճախաւ ուսանողները կարող չեն արարեղէն կամ Ֆրանսերէն տող մը ուղղագրութիւն և կամ թուաբանութեան մէջ պարզ բաժանում մը ընելու :

Այս պատգամաձեւ վճիռն որ թեթեւօրէն կը նետուի վարժարանի նախորդ հոգարարձութեանց և ուսուցչական մարմնոց երեսն ի վեր , որքան անարդար նոյնքան և անհիմն է՝ սա զերազանց պատճառ :

ուս. որ այդ վճիռն ապահովաւորէս հիմնուած է այն հարեւանցի քննութեանց վրայ զորս Պատ. Հոգաւարարութեան վճեմ. Ատենապետն՝ մի քանի անգամ վարժարան այցելելով՝ ափ յափոյ կատարեց հինգ տասը վայրկեանի մէջ, իր հարցումներն ուղղելով՝ անշուշտ յանգէտս, համեմատարար նուազ յաջողակ աշակերտացի Եթէ Պատ. Հոգաւարարութիւնն անսովոր հապճեպով մը գործի ձեռնարկելէ առաջ բարեհաճէր լրջօրէն և առանց կանխակալ մտածումի ուսումնասիրել վարժարանի վիճակն, հետագայեւ և ստուգել այն բազմադիմի պատճառներն որոնք կըրնան ծխտական արդիւնք տալ, և մանաւանդ եթէ հաճէր սպասել ամսվերջի հարցաքննութեանց արդիւնքը տեսնելու, ինչ որ օրինաւոր էր, վստահ ենք թէ բոլորովին տարբեր ելլակապութեան մը պիտի գար և տեղի չի պիտի մնար արձակելու վարժարանի եւ անոր պաշտօնէից դէմ՝ իր ծանօթ վճիռն:

Բ. Պատ. Հոգաւարարութիւնը դպրոցական նոր կանոնադրին ոչ թէ ոգոյն, ինչպէս կը պնդէ, այլ տառին հետեւեցաւ պահանջելով որ արդէն պաշտօնի վրայ գտնուող ուսուցիչները քննութիւն անցունեն. առ առաւել, դպրոցական տարեշրջանի լրջման, երբ պաշտօնէի դադարեալ նկատուէին բոլոր ուսուցիչը, իրաւունք ունէր մըցման կամ քննութեան հրաւիրելու զանոնք իրր թեկնածու տրամադրելի պաշտօններու: Այս մասին համամիտ են մեզ նոյն իսկ Պատ. Ընդհ. Ժողովոյ կարեւորագոյն անդամք որոնք վաւերացուցած են նոր կանոնագիրը:

Գ. Եթէ մենք, ի յարգանս Պատ. Հոգաւարարութեան, ընդունեցինք քննութեան սկզբունքը, կը յուսայինք որ գոնէ քննութեան ամենէն օրինաւոր եղանակն ի գործ կը դրուէր՝ հրաւիրելով քննելի մէն մի ճիւղին հմուտ և ձեռնհաս անձեր, որոնք կարգ ըստ կարգէ ներկայ լինելով ուսուցիչներու դասախօսութեանց, արդար և անաչառ վկայութիւն տալին անոնց դասաւանդութեանց մեթոտին, ուսուցչական կարողութեան եւ հմտութեան աստիճանին նկատմամբ, մինչ ընտրուած եղանակն, որ ի մէջ այլոց ուսուցչական արժանապատուութիւնն վերաբերելու հանգամանքն ալ ունէր, չէր կարող ճշդիւ ի վեր հանել պաշտօնէից իսկական կարողութիւնն ու արժանիքը:

Դ. Պատ. Հոգաւարարութեան հայերէն լեզուի համար իրր քննիչ նշանակած յարգելի անձերն երբ հրապարակաւ կը յայտարարեն իրենց անձեռնադասութիւնն մըցման մասնակցող ուսուցիչները քննելու ու յետոյ իրր ձեռնհաս կը վճռեն քննութեանց արդիւնքն, ակնբերեալ հակասութեան մէջ կը գտնուին, և ըստ այնմ իրենց վճիռն, որու համաձայն Պատ. Հոգաւարարութիւնը տուած է իր որոշումներն, իսպառ զուրկ է կարեւորութենէ ինչպէս մեզ նոյնպէս եւ ամեն արդարասէր և անկողմնակալ անձերու համար:

Ե. Պատ. Հոգաւարարութիւնը նոյն իսկ իր ձեռն ունեցած կանոնադրի տրամադրութեան և Պատ. Քաղ. Ժողովոյ պաշտօնադրին համաձայն, որով այս վերջինը վերահաստատած է զմեզ մեր տնօրէն-ուսուցչի պաշտօնին մէջ ներկայ տարեշրջանին համար, բնաւ իրաւունք չունէր՝ նախ քան լրումն ներկայ դպրոցական շրջանի, որ և է փոփոխութիւն քննելու մեր պաշտօնին մէջ, ինչպէս չունէր և չըրաւ մեր ամսաթիւնակի քանակութեան մասին:

Կարծեցինք իրաւունք ունենալ այս քանի մը տողերը գրելու, ի պաշտպանութիւն մեր իրաւանցի փառկանկատութիւնը չի ներեր մեզ խնդրոյն յարուկից ինչ ինչ պարագայներու վրայ ծանրանալ և մանրամասնութեանց մէջ մտնել:

Մնամ յարգանք
ԿԱՐԱՊԵՏ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ
Նախորդ Տնօրէն Գ. Վարժարանի
Գաւիթէ, 15 Յունիս 1897

ՏՕՔԹՕՐ ԼՕՆԿ

ՏՐ. ԼՕՆԿ, մասնագէտ կանանց, սսամոսի, մորթի եւ ջղային հիւանդութեանց: Կ'ընդունի իրենց դիմող հիւանդները Մեզոն Զահար, Շէքիւրէ Զօքիի հիւր դէմք. ամեն օր առաւօտեան ժամը 10էն 12 եւ կէս օրէն վերջ 3էն 5: Բոլոր վկայեալ աղբաւք ձրի կը դարմանուին:

Le Gérant: HENRY SAKAKINI
Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

Յ. ԵՒ Կ. ՄԱԹՈՍԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԳԱՀԻՐԷ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՆԷԹԻ
ՄԵԾԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՐԱՆ

Ընդհանուր Մքերանոց «Շարա Ազապ»
Խառն Դասաւանդներու դէմ:

ԸՆԹԱՅԻԿ ԳԻՆ ՍԻԿԱՆԷԹՆԵՐՈՒ

Սիկարէթ Ռուանալ 1000 հատը 2 1/2 Անգ. ոսկի

» Խըտիվեալ » » 2 » »
» Պալատական » » 1 1/2 » »
» Պօհճա » » 1 1/4 » »
» Նաթիւրէլ » » 1 » »
» Ծօռ » » 20 ֆրանք

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ

ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՅԱՐԱՐ

Հայ եկեղեցւոյ դէմ բայած խանութին
մէջ ամենէն դժուարահաճները գոհացնելու

Եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սովորական գիներով:

Ուզողներու համար լուացարարութեան ճիւղ մ'ալ աւելցուած է, ուր՝ յաճախողներուն ճերմակեղէնները զատ զատ լուայու գնահատելի գրութիւնը հաստատած է:

Ի դիւրութիւն յաճախողաց ճերմակեղէնները՝ ինք անձամբ պիտի առնէ տուներէն և պիտի վերադարձնէ:

ԱՌՈՂՋՈՒԹԻԻՆ, ՈՅԺ, ԿՈՐՈՎ

ԴԱՐՄԱՆ ԱՆԱՐԻՆՈՒԹԵԱՆ, ՏԿԱՐՈՒԹԵԱՆ,
ԵՒ ԶՂԱՅԻՆ ՀԻԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ԼԸ ՊԻՕԺԵՆ

Միակ սնունդ Գործողի հիւանդներու համար, կազդուիչ սրտի, ճնշաւակն գործաւանդներու, առեան եւ ջղային հիւանդութիւններու:

Կր յանձնարարուի հեծեղանի գործածողներուն: Մեանչելի դեղ ոյժի պէտք ունեցողներուն համար:

ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՄԵՆ ԴԵՂԱՐԱՆԵՐՈՒ ՄԷՋ

Մքերանոց. — Ա. ՄԱՆՏՈՅԻԱԻ ԱճԼՈ—
Եգիպտական դեղարանը Էգպէֆիէ, Գահիթէ:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՓ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻԵՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ր Ա Ն Ք	Խառն	Սիկար.	Կէս ուղ.	Սիկար.	Էրարէս	Սիկար.	Էրարէս	Սիկար.	Էրարէս
	1.2.3.4.	1.2.3.4.	1.2.3.4.	1.2.3.4.	1. 2 4.	1.2.3.4.	1. 2 4.	1 2 3 4.	1 2 3 4.
Գաւիթէ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնհա	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	առտ. 12 35
Թանթա	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
»	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
»	երեկոյ 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Տամանհուր	»	—	—	—	—	—	—	—	—
Աղեքսանդրիա	» 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅԻ ԳԱՀԻՐԷ ԳԻԾ

Կ Ա Յ Ր Ա Ն Ք	Սիկար.	Կէս ուղ.	Սիկար.	Էրարէս	Խառն	Սիկար.	Էրարէս	Սիկար.	Էրարէս
	1.2.3.4.	1.2.3.4.	1.2.3.4.	1 2 4.	առտ.	1.2.3.4.	1 2 4.	1 2 3 4.	1 2 3 4.
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	առտ. 9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհուր	» —	8 6	8 58	10 2	երեկ. 12 14	4 13	5 15	8 6	առտ. 1 9
Թանթա	» —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
»	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
»	երեկ. —	—	—	—	—	—	—	—	—
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գաւիթէ	» 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՋ

ՊԵՆՀԱՅԻ ԶԱՄԲԱՅ

ՍԻԻԷՋ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գաւիթէ	մեկ. 11 40	7 —	Սիկար (բարափ)	մեկ. 9 50	—
»	երեկոյ 12 28	7 48	» կայարան	» —	3 30
»	մեկ. 12 33	7 53	» երեկոյ 1 20	» —	7 5
»	» —	—	» —	» —	—
Զակաղիկ	» 1 34	8 54	» —	» —	—
»	մեկ. 1 44	9 4	» —	» —	—
»	» —	—	» —	» —	—
Իսմաիլիա	մեկ. 3 40	1 —	» —	» —	—
»	» —	—	» —	» —	—
Սիկար կայարան	» —	5 —	» —	» —	—
Տօք (բարափ)	» 6 55	—	» —	» —	—